

ՏԱՍԵՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և ածն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խաւքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Նուրուջ. Նա-
մակ խմբագրին. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ թիւրքաց Հայաստա-
նից. Երկրաշարժ Երկրագլուխ. Արտաքին լուրեր. —
ԽԱՌՆ. ԼՈՒՐԵՐ. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. —ԲՈՐՍՍԱ. —ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Չորս տարի
Շապիթի խմբակներում չընթացողներին արդիւնքից.

ՆԵՐԻՒՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՒԹՈՅ

Յուլիսի 7-ին

Վեհապառ Վաթիկանի կողմից համա-
ձայն, հինգ թէ վեց ամիս սրանից առաջ, տե-
ղիս Մարիամեան օրիորդաց դպրոցում ժողով
կայացաւ Զէյթունի հրկիզեալների օգտին հան-
դանակութիւն բաց անելու: Ընտրվեցան ան-
դամներ, որոնցից մի քանիսը ուղարկուեցան
յայտնեցին իրանց պատրաստակաւութիւնը ամեն
կերպ աշխատելու՝ գործին նպաստելու: Անդամ-
ներ ընտրելուց յետոյ, ժողովականներն մէջ ան-
միջապէս հանդանակութիւն կայացաւ, որից գո-
յացաւ 70 թէ 80 ռ.: Այդ օրից մինչեւ այսօր, որ
աւելի քան 180 օր է անցել, ոչ մի բացատրու-
թիւն, ոչ մի տեղեկութիւն չի մատուցեալ ոչ մի-
այն անդամների գործունէութեան հետեւանքի վե-
րաբերալ, այլ և կանխիկ ժողոված փողի վերա-
բերալ անգամ... Այս աստիճան անտարբեր լի-
նել դէպի հասարակական տուրքը, անուշադրու-
թեան մասին ժողովրդի անկեղծ սրտից բոլորած
նուէրը, պատուաբեր չը պիտի համարվի գործի
դիմաւորներին... Վաւ է անազան, քան ոչ եր-
բէք՝ ասում է առածը, դո՛ւն հիմա բացատրութիւն
արվել գործի մասին լրագրութեան միջոցով:

Անցեալ ամիս 30-ին, Մարիամեան օր. դպրո-
ցում նոյն դպրոցի նորաւարտ աշակերտներին
ստուիւն «Պօլիտեխնիկ» մանկական ներկայացու-
մի: Ներկայացումից յետոյ երեք տեսարանով ե-
ղան կենդանի պատկերներ, որոնց նիւթը վերց-
րած էր պիէսայի բովանդակութիւնից: Ներ-
կայացմանը ներկայ էին աշակերտների և աշա-
կերտուհիների ծնողներից շատերը, որոնք ուրախ
սպասեցին իրանց վերադարձին: Մտաւ ճիւղ
էր:

Ենթադէս լսվում է, սիրողները մտադիր են ա-
մառվայ ընթացքում յօգուտ ուսումնարանին՝ Սոն-
դուկեանցի հեղինակութիւններից մի քանի ներ-
կայացումներ տալ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶՈՐՍ ՏԱՐԻ ԾԱՎԵՐԻ-ԽՄԵՐԻՒՎՈՒՄ ԾՐԱՍԴԱՅՈՒ-
ԹԵՆՆ ԱՐԳԻՒՆԻՔԻՑ

Գաւառի բոլոր գիւղերի մէջ միմյան վէջ
գիւղը գրաւում է իր գիւղը՝ օտարի ուշադրու-
թիւնը, որովհետեւ գաւառում այդպիսի տափա-
բակ տեղ այլ ևս ուրիշ տեղ չը կայ: Աւանդու-
թիւնն իսկ չէ լուր՝ այս մասին: Երբոր պարս-
կաց Թամաս-խանը պատերազմի զօրք է ուղարկել
Շապիթի իշխանի վրա Արդահանից, զայիս հաս-
նում է Արդահանի և Շապիթի մէջտեղ դանկած
սարի ծայրը, որտեղից երևում է Շապիթի իր սե-
անտաներով և խորաւորաբար ձորերով. զօրա-
զուլումը մտածում է, թէ այսպիսի մի տեղից զօր-
քը ամբողջապէս դուրս տանել կասկածելի է, նրա
համար, որպէս զի հաշիւը պահի, հրամայում է
զօրքին, որ իւրաքանչիւր ոք մի մի քար վերառ-

Ահա մի քանի չարախ է, որ այստեղ ժողով-
վել են Նուրուջ չընթացողներին գիւղական ուսու-
ցիչները, որոնք պատրաստվում են քաղաքային
դպրոցում ուսուցչական կոչումը ձեռք բերելու:
Յուրանք, որ այս բանը կիրաւորվի և չի կրկն-
վի քահանայացիները պատրաստելու ձեռնարկու-
թիւնը. մի քանի ամիս առաջ 3—4 հոգի, 50—60
տարեկան տիրացուներ եկել էին այստեղ և
վճարել էր, որ քահանաներից և ուսուցիչներից
ունենէ նրանց հետ պարապեն: Երկու երեք դաս
եղաւ և ծեր աշակերտները այլ ևս չը յաճախե-
ցին իրանց դաստաններին:

«Մշակ» ընթերցողներին ինչպէս յայտնի է,
Նուրուջ նախկին փոխանորդ հայր Սաթուհեանց
սկսեց շինել տալ օրիորդաց դպրոցի համար
մի նոր շինութիւն. նա ոչինչ չանց չը
իննայեց, աշխատեց՝ որքան կարողացաւ և վեր-
ջագէտ նպատակին հասաւ, իրաւորեց զպրո-
ցի այն հակա շինութիւնը, որը նայողի վրա
գրանցելի ապագորութիւն է թողնում: Թէև երկ-
րորդ տարին է, որ աշակերտները այնտեղ են
սովորում, այնու ամենայնիւ դեռ շինութիւնը
պակասութիւններ և շատ թերի կողմեր ունի, ո-
րոնց վրա կի՛ն ուշադրութիւն չը դարձնվի, մի
քանի տարվայ ընթացքում պիտի փչանայ, քանի-
վի... Տարաբաղաւարտ աշխուշ ուշադրութիւն դարձ-
նող, անկեղծ գործող չը կայ: Ենթադէս հա-
մար կազմված մասնագիտով անդամների կող-
մից ներկայացում ունի ջանք չէ նշմարվում և
այսպիսով երկար տարիների աշխատանքը կը
կորչի:

ՆԱՄԱԿ ԽՄԵՐԻՒՆ

Մտկվա, 6 յուլիսի

Մի քանի անստույգ և աղաւաղած լուրերի
պատճառով, որոնք հաղորդված էին «Արձագանք»
21 համարում, Սոսիկայի հայոց եկեղեցիների վե-
րաբերմամբ, յարգաւարտ ինչո՞ք մտադրել հե-
տեւանքի ձիւղ տեղեկութիւնները, հիմնված հաս-
տատ փաստերի վրա: Առաջին ընդհանուր ժողո-
վը կայացաւ 22-ին մայիսի, որովհետ էր քննել հե-
տեւանքի զեկուցումները. ա) Յաւանդութիւն յայտնել
մայրաքաղաքների եկեղեցիների հոգաբարձութեան
իշխան Արամիւնի-Վաղարշանի մահվան համար.
բ) Խորհրդի երկու անդամ և մի տեղապահ ընտ-
րել և դ) Անցեալ տարվայ հաշիւը լսել: Նիստը
բացվեց նախադարձութեամբ Սուլիման-Շահին Ա-
ռաջինի զեկուցումն ընդունելից միջաձայն հաւա-
նութեամբ: Երկրորդ հարցին քննադատութեան

նէ և դնէ իր ցոյց տուած տեղը, որտեղ գոյա-
նում է մի բարձր քարակոյտ. յետ դառնալիս հը-
րամայում է, որ այդ քարակոյտից վերցնէ իւրա-
քանչիւր ոք մի մի քար. պակասած զօրքի փո-
խարքն քարը մնում է այնտեղ կուտակված մինչև
այսօր, այս իրողութիւնից սարի անունը մնում է
«Ներք», որ ասել է կուտակված: Այս դէպքից
յետոյ երբոր զօրքը հասնում է Արդահան, Թա-
մաս-խանը հարցնում է, թէ ինչ տեսան Շապիթ-
թում, ինչպիսի երկիր է. նրանք պատասխանում
են «մի արտ և մի բաղ» կայ միայն, արտը այս
վէջի դաշտին է, իսկ բաղը Անկիւս գիւղի գա-
ռիկայրը, որ մի ժամանակ ամենամեծ այգի է լի-
նում գաւառում Նարեկովա անուամբ:

Գաւառիս հայերը խօսում են իրանց մայրենի
լեզուով և պէտք է դարձանալ, որ սարկով այս-
պիսի մի խոզ գաւառում կենտրոնացած թուրքե-
րի մէջ, կարողացել է մի ափ ժողովուրդը պա-
հել իր մայրենի լեզուն, թէև պէտք է խոստո-
ւանվել, որ լեզուի մէջ անողորմաբար խառն են
վրացերէն բառեր: Բայց նկատելու արժանի է,
որ երբոր ներկայ է լինում մի թուրք և չեն կա-
մենում, որ նա իմանայ իրանց խօսածը, այն
ժամանակ գործ են ածում մաքուր հայերէն բա-
ռեր, օրինակի համար «չարօխը» թըրքի մօտ

ժամանակ՝ բժ. Շահինեանց հետեւալ առաջար-
կութիւնն արեց (պէտք է ի նկատի ունենալ, որ
տեղիս հայոց եկեղեցական կալուածների կառա-
վարութիւնը՝ կանոնադրութեան համեմատ՝ յանձն-
ված է խորհրդին, որ բաղկանում է 6 անդա-
մներից և 2 տեղապահներից, որոնք փոխարինում
են ըստ դիպման բացակայող կամ պաշտօնաթող
եղած անդամներին): «Որովհետեւ ներկայումս բա-
ցի ժամանակը լրացուցած 2 անդամների և մի
տեղապահի՝ Խորհրդին պակասում են և 2 ան-
դամներ (մէկը մեռած է, երկրորդը՝ ժամանակից
առաջ հրաժարված), և երկու անդամներին ընտ-
րութեամբ չէ լրանում Խորհրդի ամբողջ կազմա-
կերպութիւնը, իսկ եթէ մէկը նոցանից հրաժար-
վի, դրեթէ չիտով չափ կը պակասի թիւը և այս
անտարակոյտ աղեղնութիւն կունենայ կալուածնե-
րի կառավարութեան կանոնաւոր ընթացքի վրա,
ուստի թողլուութիւն խնդրել Բարձրագոյն իշ-
խանութիւնից այլ և 2 անդամներ ընտրելու,
Խորհրդի կազմակերպութիւնը լրացնելու հա-
մար: Այս առաջարկութիւնը սատարի դիմա-
դրութեան հանդիպեց Խորհրդի անդամների կող-
մից և, տաք վիճաբանութիւններից յետոյ, անա-
զին մեծամասնութեամբ ընդունեց: Այսպէս ձեռ-
նամուկ եղան քուէարկութեան և մեծամասնու-
թեամբ ձայնի ընտրվեցան՝ պ. պ. Տէր-Յակոբեան,
Թանդեան և բժ. Շահինեան: Հաջորդաբար
թեան ժամանակ երեսաց, որ թէ կալուածներից և
թէ եկեղեցուց ստացված ահագին եկամուտները
ոչ միայն չեն բաւականանում ծախքը ծածկելու,
այլ մինչև անգամ պակասում է մօտ 400 ռուբլի:
Այդ հարցի քննադատութիւնը պատճառ եղաւ
չեւմ և երկարատեւ վիճաբանութեան, որով և այլ
զանազան բաղկակողմանի խնդիրներ չարվեցան,
որոնց թուում և բժ. Շահինեան նորից հարց
բարձրացրեց թէ երեցիոյանը իրաւունք ունի
արդե՞ք օգտուել եկեղեցուց—ձրիաբար ընկա-
րան, վառելիք և ջուր ստանալով, որովհետեւ առ-
նուառն այս ամենը պէտք է հաշուել 1,000
ռուբլի (թէև երեցիոյանի բարեկեցումը «Արձա-
գանք» մէջ՝ 8 տեսակետից երկարախնդիր
կարանը դիտարկել փոքրիկ է կոչում) միայն
ներքին մոլորեցնելու համար): Տասն հազար ռուբլի
արդե՞ք բերող տները կառավարելու համար հա-
զար ռուբլի վճարել չափազանցութիւն է և չույ-
լութիւն, ամենաւանդ երբ եկեղեցին ամեն տարի
դեֆիցիտ ունի: Եկեղեցու երեցիոյանի պաշտօնը
մի վերին աստիճանի պատուաւոր պաշտօն է,
այս պատճառով և ծխակաշիկները, ընտրելով այս
պաշտօնի համար մի պատուաւոր և յարգելի
անձնաւորութիւն, յոյս են ունենում ոչ թէ նրա

կողմնակի աշխատութեան վրա, եկեղեցական
տների կառավարութեամբ, այլ դէպք եղած ժա-
մանակ նրա կողմից որ և է նիւթական գործա-
րութիւն տեսնել եկեղեցու օգտին: Ներկայ դէպ-
քում, չը նայելով որ երեցիոյանը երկարաւորու-
թեան և կուտակցութեան գլխաւոր պատճառն է
ծխակաշիկների մէջ, նա իբրեւ մի ծանր բեռն ծա-
րացած է եկեղեցական բնութեւի վրա, թողնե՞ք
և այն, որ օժանդակութիւն ստանալով եկեղեցուց,
նա ստորագնում է երեցիոյանի պատուաւոր
պաշտօնը: Իսկ մեր հոգևորականութիւնը, բազ-
մամարդ ընտանիքով, սեղմված է 3—4 մանր
սեռականների մէջ, փոխադի ենթարկելով թէ իր և
թէ իր ընտանիքի կեանքը: Այս առաջարկութիւնը
ընդունվեց մեծամասն հաւանութեամբ: Մի և
նոյն մտքով խօսեց և պ. Տէր-Յակոբեան. «Մեր
բաղմամբար հասարակութեան մէջ, ասեց նա,
միթէ չէր գտնվելու մէկը, որ ձրիաբար, առանց
օգտվելու, ծառայէր հասարակութեանը և եկեղե-
ցուն: Երկու կողմերից ևս տաք վիճաբանու-
թիւններ եղան և ձայների մեծամասնութեամբ
որոշվեց խնդրել Խորհրդին կարելիին չափ կրճա-
տել եկեղեցական կալուածների կառավարութեան
ծախքը (ի նկատի ունենալով, ի հարկէ, հանել
երեցիոյանին բնակարանից և այլն): Մօսկվայի
եկեղեցական Խորհուրդը, յայտնի չէ մեզ թէ՛ ժո-
ղովի վճուից անբաւական մնաց, թէ ընտրութիւն-
ներից և թէ մի որ և է ուրիշ չարժանութիւններից,
—բողոքեց Արամիւնի-Վաղարշանին, որ և ընդունեց
ու կարգադրեց նոր ժողով գումարել և այս ժո-
ղով կայացաւ յուլիսի 3-ին: Առաջին գրաւոր
ձայնաւորութիւնից յետոյ, որով մեծամասնու-
թեամբ դարձեալ առաջ եկան մի և նոյն անձինք՝
Շահինեան, Տէր-Յակոբեան, Վաղարշաբեանց և
Թանդեան, ձեռնամուկ եղան քուէարկութեան և
այս վերջինը արտայայտեց մի և նոյն հետեւանքը:
Անբաւական կողմը, որի գլուխը անցած էր նոյն
երեսիկները, իսպառ մոռանալով մարդավարու-
թեան կանոնները և մեծամասնութեան իրաւուն-
քը—այն է ընտրել այն մարդուն, որին արժա-
նաւոր են համարում և օգտաւէտ թէ կալուած-
ների կառավարութեան և թէ եկեղեցական շա-
հերը պահպանելու համար, դիտարկեց աղմուկ
բարձրացրեց և սկսեց պահանջել ժողովի փա-
կում: Օգուտ զարկելով կանոնադրութեան մէջ
յօդուածից, ուր գրած է թէ՛ անկարգութիւն
պատահած ժամանակ՝ նախագահը իրաւունք ու-
նի փակել նիստը, երեցիոյանականները շարու-
նակում էին սանձարձակօրէն աղմուկ հանել և
աղաղակել, որով և ստիպեցին նախադաշին փա-
կել նիստը: Թէև այս դէպքում աւելի նպատակայար-

խոտ) որով կանաչ գոյն են ներկում և առաւօտ-
րէն գտնվում է Խմբակէվի կարգալ սարերի վը-
րառ:

Թուրքերի մէջ մնացած է մինչև հիմա քրիս-
տոնէութեան այն նշանը, որ խմբի վրա ձեռքով
խաչ են ձևացնում, մինչև անգամ հաց կամ
«ճաղ» թխելու համար ցաւառում գործածված
կաւէ կեցերի միջի յատակի վրա նկարված է լի-
նում մի պարզ խաչ: Այսպիսի կեցերն իրանք են
չինում և գտնվում է ամեն տան մէջ: Թէև հաս-
կանալի է, որ նրանք այդ գիտութեամբ չեն անում,
այլ քրիստոնեայ ժամանակից ընտանեաց փակ-
ված չընթանի մէջ պահված աւանդութեամբ:

Խմբակէվիները օգոստոս ամսին Մարիօքա են
անուանում. տարակոյտ չը կայ, որ մնացած է
այսպէս անուանել նրանից, որ այդ ամիսը, ինչ-
պէս շատ տեղեր, նոյնպէս և իրանք սոմալաբու-
թեամբ էին կատարում իրանց քրիստոնէութեան
ժամանակում ի պատիւ Տիրամօր: Գաւառում
կան մի քանի եկեղեցիների աւերակներ և ամա-
յացած եկեղեցիներ, ինչպէս Տէրթի վանքը, (Շապի-
թում)՝ Գաւառի (Խմբակէվում, որ և ուսումնաս-
ղի է), Ծէթիլէթ-Աղաբայի եկեղեցին և Տալէթի-
վան եկեղեցու աւերակը, ուր այցելում են և Ոք-
բօրակերտի ուսումնարանները, երբոր թուրքերը

մար կը լինէր առժամանակ ընդհատել նիստը, և այս ժամանակամիջոցում կըքերը հանդարտեցնել, որով հնարաւոր կը լինէր նիստը խաղաղութեամբ հասցնել իր վախճանին: Սակայն, ամենայն դէպս խաղաղ մեղ անյայտ պատճառով, ընդունեց առաջին միջոցը, որով ընտրութիւնները յետաձգեց այլ ևս քանի մի ամիսներ: Բայց եկեղեցու շահերը թող մնան երեսի վրա, ինչ փոյթ....

Միակամ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեղ գրում են ԳՕՐԻՍԻՅ, որ յուլիսի 8-ին նահանգական դատարանի տեղային բաժնում ընկնում էր Տաթևի վանքի տէրութեան հետ ունեցած վեճը: Դատարանը վճռեց յատկացնել վանքին 12 գիւղ, որոնց թիւում նշանաւոր են մանաւանդ Խոտ, Շնէր և Հալիձոր գիւղերը:

Մեղ խնդրում են ուղղել հետեւեալ սխալը, որը մտաւ «Մշակի» № 77-ի մէջ տպւած Մօզդոկից գրած լուրում: Տպւած էր թէ հողաբարձութիւնը «խաթրի» համար վկայականներ տուց չորս աշակերտներին, իսկ պէտք է լինէր՝ չորս վարժապետներին:

ՇՈՒՇՈՒՅ մեղ գրում են: «Շուշու նորաբաց գրադարան-ընթերցարանում աչքի են ընկնում 1000 հատոր գրքեր՝ թէ հայերէն և թէ ռուսերէն լեզուով, որոնք մեծ մասամբ բաղկացած են նշանաւոր բանաստեղծների և գրողների շարահրդուրդներից: Այս գրքերի թիւում կան 100 հատ հին ձեռագիրներ: Գրադարանը գրքերի ցուցակ չունի այն պատճառով, որ գրքերի մեծ մասը դեռ ևս կազմւած չէ և գրադարանագետը սպասում է գրքերի կազմուծ, որպէս զի ցուցակ չլինէ: Գրադարանում այցելուներին արգելւած է ծխել և դա շատ լաւ կարգադրութիւն է: Մինչև անգամ սեղանի վրա չէճ տեսնի ոչ մի խմորամաներ, ոչ էլ լուցիկներ: Կարող գրադարանում լաւ է պահուում արգելւած է չրջել, բարձր խօսել և այլն: Այդ տեսակ խիստ և անհրաժեշտ կանօններ ընդունւած են ամբողջ աշխարհի գրադարաններում և ընթերցարաններում»:

Մենք արդէն հաղորդել էինք ընթերցողներին, որ ռուս գրող Գրեքենշչեկով խեղդվեցաւ ծովի մէջ, Պետերբուրգից ոչ հեռու և հանգուցեալի դիակը չը գտնուեցաւ: Այժմ «СЫБЪ ОТЕЧЕСТВО» լրագիրը, որին հանգուցեալը աշխատակցում էր, հաղորդում է որ այս օրերս ձկնորսները դտան հանգուցեալի դիակը, որին ծովի ալիքները գցեցին եղբորն բռնադատելու և ինքնապատժելու մէջ:

Այս տարի «Մշակի» բաժանորդներին թիւը աւելի շատ է, քան թէ անցեալ 1887 թիւին: Առհասարակ, մեր լրագրի բաժանորդները թէև շատ դանդաղ և աննշան կերպով բայց այնու ամենայնիւ տարուց տարի անընդհատաբար աւելանում են: Միայն թիֆլիսում գրեթէ միշտ նոյն թիւն է մնում «Մշակի» աշխատակիցների ու թղթակիցների թիւն էլ թէ համալսարանական և թէ ոչ-համալսարանական երիտասարդութեան մի-

այս հին աղօթատեղիների մօտերից և կամ հանդէպից հարս են անցկացնում, հարսի կարմիր քօղը կամ բոլորովին վերցնում են և կամ վրան ծածկում են սև «հաւուցած» կամ մի ուրիշ սև շոր, մինչև որ անցնեն և այլ ևս այդ քրիստոնէից նուիրւած վայրը չերևայ: Խմբիւնէլի մասի գիւղերից Սուրբկան գիւղի առջև ժայռի վրա դրնւած մի եկեղեցու աւերակի մօտերից մինչև հիմա ոչ մի երիտասարդ կամ օրիորդ, որոնք զարդարւած են լինում ամուսնանալու օրերում, չեն կարողանում անցնել, հակառակ դէպքում վնասում են գովելուց: Այս աւերակի պատի վրա երևում է փորւած մի պարզ խաչ: Սուրբկանցիք առհասարակ ուխտ են մտնում այս աւերակում, չը նայելով որ իրանք թուրքեր են: Կարծեմ հետաքրքիր կը լինի լսել, որ սուրբկանցիք տաճկաց տիրապետութեան ժամանակ զանազ գտնելու նպատակով, իրանց գիւղի սահմանում մի այլ եկեղեցու աւերակը փորելով գտել էին մի զոյգ խաչքար, երկայն բանալիներ, չղթայով միմեանց վրա կախ ընկած: Այս բանալիները տեսնելու համար բաւական է պատկերները վրա Պետրոս առաքեալի ձեռքում տեսնւած բանալիները տեսնել, որոնց կատարեալ նմանութիւն ունեն:

Յից՝ տարուց տարի աւելանում է:

Հարկւր անգամ խնդրել ենք և այժմ նորից խնդրում ենք բաժանորդներին՝ նոր հասցէն ուղարկելու ժամանակ անպատճառ հաղորդել խոբ-բաղրութեանը և հին հասցէն: Հասցէն պէտք է կամ ձեռքով որոշ գրւած լինի, կամ կարելի է ուղարկել և մեր լրագրի վերջին համարի տպւած բանալիով:

Ստացանք Կ. Պոլսի հայազգի բժշկապետ Թաւր ճ. Կիրակոսեանից նրա աշխատասիրած «Բարեկամ ամենեցուն» բժշկական գրքից: Այդ հեղինակութիւնը յօդուած է համալսարանական դրութեամբ (մեթօդով): Գրքիցը տպւած է Կ. Պոլսում, «Արեւիքի» տպագրութեամբ, անցեալ 1887 թիւն և ունի ընդամենը 288 երես: Գօկտօր Կիրակոսեանի գրութեանը պարունակում է իւր մէջ ազատաւոր առողջապահական խորհուրդներ, բայց ինչ կը վերաբերի բժշկութեան համալսարանական մեթօդին, դա մի ժամանակ մեծ ընդունակութիւն ունի: Եւրօպայում, սակայն այժմ հետզհետէ մօտ յայտն ընկնում է: Ինչպէս յայտնի է համալսարանական իր սկզբունքը ընդունած է թէ «նմանը նմանին է բժշկում» (Similia similibus curantur), այսինքն որ մի տկարութիւն պէտք է բժշկել այնպիսի դեղով, որը առողջ մարմնի մէջ կառավարող նոյն իսկ այն երեւոյթները, որոնք յաւանդել են իրենց հիւանդութեան: Այդ սկզբունքը վաղուց հերքւած է բժշկական գիտութիւնից: Օրինակ խինան բժշկում է տենդը, բայց առողջ մարդը խինա ընդունելով, նրա կազմուածքի մէջ տենդ կամ տենդանման նշաններ չեն առաջացնում: Գրքի գինը 15 դանկան է:

Մենք լսում ենք, որ աշնան սկզբներին վեհա-փառ Կաթողիկոսը գալու է թիֆլիս:

«Մշակի» № 81-ի լուրերի մէջ տպագրական սխալ է մտել: Բոստով (Գօնի վրա) քաղաքի բնակիչ Ալիմեան ոչ թէ 3 հազար բուրլի է կտակել տիրակալական դպրոցին, այլ 300 հազար բուրլի:

ԳՕՐԻՍԻՅ մեղ գրում են: «Գաւառիս արդեւորները մեծ յուսահատութեան մէջ են: «Թող» ասուած հիւանդութեանը սաստիկ վնասում է խաղողի այգիներին: Հիւանդութեան նշանը հետեւեալն է. մոխրագոյն փոշի (որից և թող անուն է ստացել) նստում է խաղողի հատիկների վրա, հատիկը ըսկում է ճաքճաքով ու վեր թափվել: Այգետէրերը հիւանդութեան առաջին առնելու ոչինչ միջոց չեն իմանում: Առանձին առանձին ոչ ոք էլ ոչ չունի մասնագէտ բերել տալու, որովհետև ամենամեծ այդի ունեցողը ստանում է ամենաշատը՝ 400 բուրլի, հարկաւ այդ գումարից մի բաժին յատկացնել դժուար է, բայց ինչ որ վերաբերւում է թէ այդեւորները միմեան և ընկերական հաշուով մասնագէտ վարձեն ամառ ժամանակ, — դրա վրա մի խօսք... Այգետէրերը բարեւոր են համարում առանձին վնասել, քան թէ ընկերովի օգտվել: Այդ կողմից մեր ժողովուրդը դարմանալի է. ամենեին հաւատ չունեն միմեանց վրա: Ամբողջ օրերը խորհում են թէ

IV

Ներկայգործութիւնը Շաւշէթում միակ միջոց է համարւում բնակիչներին ապրուստի համար: Հօղ բացի այն, որ բերրի չէ, միանգամայն և շատ սակաւ է: Զանքի տակ մտնող հողը երեք մասից մի մաս հաղիւ է պարունակվում, մնացած հողերը կամ անշահ քարոտ վայրեր են և կամ ծածկւած են մաքրանքով ու անտառներով: Զանգուած հացադոյներն են ցորեն, դարի, քերդիկա (ցորեն և դարին խառն), եղիպտոսներն և կորեկ: Զորենի լաւ տեսակները լինում են կինթոսի գիւղերում, ինչպէս Սաթէլ, Վէմբոշէլ և այլն, իսկ սարին մօտիկ գիւղերում շատ ստոր տեսակի, մասնաւոր մի քանի գիւղերում լինում է դիժ ցորեն, որին մաղաւոր կամ «դելիլ» են ասում: Երբ որ մաղը մաղաւոր հացն ուտում է, մանաւանդ եթէ նոր թիւած և տաք լինի, կամ լուրով պատրաստված, ընկնում է հարցածի նման, սիրտն է խառնվում և երբեմն այնպէս է ծանրանում, որ մինչև 24 ժամ անդադ ընկնում ընում է: Գիւղացիք սորա դէմ դրծ են անձում իրեն դեղ-թթալ դողալի տղայից պատրաստված թթուաշ խմիչք, որը ըստ բնականին օգնում է: Մաղաւոր կամ դելիլան դոյնում է հողի վրա յատկաւ թիւնից կամ կլիմայից, որովհետև փորձով տեսն-

ինչ հնար գտնեն ընկերին վնասելու... Խօսելով «թող» հիւանդութեան մասին աւելորդ չենք համարում մասնագէտներից խնդրել այդ հիւանդութեան մասին մի քանի տեղեկութիւն յայտնել լրագրի միջոցով և թէ կարելի է այդ հիւանդութեան վերաբերեալ մի քանի գրքերի անունը յիշել:

Թիֆլիսը այս ամառ դժալի կերպով դեղեցկանում է. համարեա թէ փոքր ի շատէ նշանաւոր փողոցների վրա աները կարկատոււմ, ներկվում և կարգի են բերվում: Գաղաքում կատարվող այդ վերանորոգութիւնները, որոնք խոտանում են բաւական շքեղացնել մեր շատ կողմից ստիական բնաւորութիւն ունեցող թիֆլիսը, զգալի կերպով և մեծ եռանդով առաջ են դնում թէ բանտները, թէ վարպետները և թէ շինութիւնների համար դանազան միջոցներ պատրաստող գործարանները ոչ մի բօպէ պարապ չեն և մեծ պատուէրներ են ստանում ամէն օր:

Անդրկովկասի զանազան կողմերից մեզ հասած տեղեկութիւններից երեսում է, որ այս տարի էլ, ինչպէս և միշտ, հայոց դպրոցներում վարժապետներ, վարժուհիների և տեսուչների անվերջանալի փոփոխութիւններ են լինում, սկսած թեմական դպրոցներից մինչև վերջին ծխական դպրոցները: Վաւի դարմանալին այն է այդ ինքն ըստ ինքեան վնասակար սօվորութեան մէջ, որ դպրոցների վարչութիւնները ոչինչ չեն յայտնում վարժապետներին ընտրութիւններից անմիջապէս յետոյ, այլ երբ անցնում է մի ամբողջ ամիս, և վարժապետները միաժամ առանձնական տարվան են սպասում, յանկարծ հողաբարձուներից թուղթ են ստանում, որ նախկին տարվայ ռոճիկը չեն կարող տալ, այլ պակաս կը տան: Եւ այդպիսով 400—500 ողորմելի ռոճիկը իջնում է մինչև 300—400 բուրլու: Այդպիսի անկանոն յարաբերութիւնը դպրոցական կեանքի մէջ միանգամայն անտանելի է դարձնում վարժապետների և վարժուհիների դրութիւնը, որոնց մի նշանաւոր մասը այս բօպէս թիֆլիսում համախմբւած, չը գիտեն էլ թէ ճիշտեղ կայ աղատեղ, ու պէտք է դիմել և ինչ պէտք է անել տեսուչներին առանց տեղ չը մնալու: Համար: Այդքան նեղ վիճակի մէջ դնել մանկավարժական առարկայում գործողներին և յանցանք է և աննկերելի:

Տեղական ռուս լրագրիներին Հին-Նախիջևանից գրում են հետեւեալը. «Մեղանում յուլիսի 3-ից սկսած մինչև յուլիսի 12-ը անտանելի շոգեր է անում: Թէ քաղաքում և թէ շրջակայ գիւղերում տարածված են զանազան տարափոփելի հիւանդութիւններ՝ որպէս տիֆ, ծայրիկ, կարմրուկ, և այլն. հաստատաւ աղբիւրներից լցվում է, որ խօշկոյնայով հիւանդացողներ մի քանի դէպքեր են եղել, որոնք մահով են վերջացել: Լուր է տարածվել, որ մինչև այժմ Պարսկաստանում ապաստան դրած յայտնի աւազակ Ֆեարաբը երեսացել է մեր գաւառի սահմաններում: Սակայն այդ լուրերը հաստատութեան կարօտ են:

Ինչ որ երբեմն էլ ուրիշ տեղից բերված մաքուր սերմ ցանվի, այսուամենայնիւ նորից դոյնում են: Եղիպտոսները համարեա հաղիւ 50—60 տարի են, ինչ որ մուրը է գործել Շաւշէթում խէճի-դաղէ Սաթի բէլի միջոցով: Հողի սակաւութեան դէմ հացադոյսի պակասը լցնող միակ միջոց այժմ եղիպտոսներն են դարձել: Գաւառում եղիպտոսները լաւ պարարտ հողում մէկին մինչև տասն և երկու և աւելի արդիւնք է տալիս, սակայն ցորենը, դարին և քերդիկն մէկին երեքից և չորսից աւել շատ հաղիւ կարող է լինում արդիւնաբերել: Եղիպտոսները ցրտային գիւղերում չէ հասնում: Այսպիսի գիւղերը կոչվում են «դեղեման», ուր ցորենը շուտ է դալիս և ուշ է գնում, իսկ միմեանքը կոչվում են «սեւիլ»:

Զեզեան գիւղերը առհասարակ ունենում են իրանց սեւիլները, ինչպէս Յօրեշէլ, Մեղաւոր, Աւաղաբա և այլն: Խմբիւնէլի մասի երկրագործութիւնը, աննշան բացառութեամբ, կայանում է եղիպտոսների մշակութեան մէջ: Գաւառի ամբողջ ժողովուրդին, որի թիւը թէ հայ և թէ թուրք ի միասին 18 հազար հողուց աւելի է, երկու սեռից, բաւականաչափ հաց չէ տալիս: այս պատճառով առհասարակ ստիկված են լինում ամառ ձմեռ հաց կրել Կարսի, Արդահանի

երեքշաբթի, յուլիսի 13-ին, անդրկովկասեան երկաթուղու գնացքով թիֆլիս բերվեցաւ թիֆլիսի նահանգական զանաւարանի զանապահի օդանավան Իվան օ. Կ. որը վերադառալ զանաւարանից յաւիտանկել էր 313 հազար բուրլ:

Լսում ենք, որ պ. Արխողում Զովանիսեանի ռուս-հայերէն բառարանի առաջին մասը արդէն տպագրվել աւարտվել է և շուտով պէտք է տարածվի բաժանորդներին:

Ինչպէս յայտնի է, այս տարվանից պէտք է դործածութեան մէջ մտնեն նոր ձևի թղթադրամներ. թիֆլիսում արդէն ստացվել են նոր ձևի քսան և հինգ բուրլիանոցներ. նրանք բաւական գեղեցիկ են:

Գօրիսից մեղ հարցնում են թէ ինչ միջոցով պէտք է բժշկել խաղողի «թող» ասուած հիւանդութիւնը: Գրան մենք պարան կարող ենք պատասխանել, որ այդ հիւանդութեան դէմ միմիայն մի միջոց է յայտնի մինչև այժմ, այն է ծծում: Գեղեցիկ է վերցնել ծծմբի կրիստալները (Сѣрный цвѣтъ), կամ փոշիացած դեղին ծծումբ, փութի մէջ լցնել (փութի կողքի ծակից), իսկ փութի բերանին մի քանի անգամ անգամ անգամ փչել խաղողի որթի տերեւների վրա ծծմբի փոշին:

Լսում ենք, որ Երևանի դպրոցի նախկին տեսուչ, Արխողում Զովանիսեան, Խլմիսի ձեռնարանի ընագիտութեան վարժապետի պաշտօն է ստացել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԲԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՅ

Սովը անվերջանալի է, և պարբերաբար երևում է այս կամ այն կողմում: Ահա թէ ինչ է գրում Կ. Պոլսի «Արեւիք» լրագրի թղթակիցը յուլիսի 6-ից Հաճընից. «Սովը կը շարունակէ և երթնելով կը սաստկանայ: Բազմաթիւ անձինք սոված մահացան: Կիլիկիոյ ի դերեղման, անօթութեան հիւանդացողք խիստ շատ են: Դրկուած 300 օսմ. ոսկին ընդ փոյթ բաժանուեցաւ. կարօտեցող, սակայն հաղիւ մէկ շարթուան պաշար եղաւ. կայսերական կառավարութիւնն ինչպէս չըջակայ քաղաքներում, կանխաւ Հաճընոյ ալ 25,000 օխայ ալիւր տուաւ: Եւ 25,000 անձանց հաղիւ քանի մ'օրուան պաշար եղաւ: Նոր հունձիք տակաւին ամբողջ մէկ ամիս մէկ շաբաթ կայ, թշուառաց համար մէն մի օր մէկ տարի դարձած է: Ինչ որ ունիւն ծախեցին ու մինչ ցարդ ապրեցան. ամբողջ ունիւն վարժարանաց ուսանողը մեծաւ մասամբ վարժարանը ձգած փողոցները կը պտտին մուրալու: Միաց. վարժարանաց տեսուչութիւնը վարժարանաց տրուած նպաստով ամեն օր հաց կը դնէ և վարժարան յաճախող աշակերտաց կը բաշխէ: Առիթ ունեցալ գիւղին հարցում մ'ուղղել յառաջդէմ աշակերտի մը որ բնաւ չը կրցաւ պատասխանել, քանզի երկու օր է որ ա-

և Ախալքալաքի կողմից:

Միակողմին մշակութիւնը մինչև անցեալ տարի թողնւած էր առանց ուշադրութեան: Մինչև հիմա մեծ քանակութեամբ չէին մշակում, և ինչ որ էլ մշակում էին, մշակութեան պահանջած պայմաններին ոչ ոք համապատասխան չէր վարվում: Այս անգամ փորձով յայտնի եղաւ, որ եթէ ծխախոտի մշակութեան լաւ հող տանեն, շատ լաւ տեսակ ծխախոտ է ստացվում Շաւշէթում, և դա Շաւշէթի այն գիւղերի համար, որտեղ կարելի է ծխախոտ մշակել, շատ օգտաւէտ կը լինի: Թէև ուշ սկսեցին, շուտ փոշմանեցին, այն պատճառով որ այս տարվայ բոլոր ծխախոտները մնացին իրանց մօտ առանց ծախվելու:

Պարտիկապետութիւնը դաւաճում, որից սակաւ չեն օգտանում, թողնւած է բոլորովին ընտրեան կամքին: Ոչ ոք այդ ճիւղին ուշադրութիւն դարձնող չը կայ: Մտաւ եթէ պտուղ կը բերի և կը հասցնէ, նրա տէրը այն ժամանակ կը գնայ նրա մօտ պտուղը ժողովուրդ, ուրիշ ժամանակ երբեք նորանով չի հետաքրքրվի: Շաւշէթի պտուղների մեծ մասը կազմում են տանձ, խնձոր, ընկուղ և զողպ. թիւնի շատ սակաւ է գտնվում:

(Կը շարունակվի)

